ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6
«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ
կայացած 2019թ. նոյեմբերի 21-ին

ՕՐԱԿԱՐԳ

1. Ակադեմիայի միջազգային գիտաժողովի արդյունքների ամփոփման, համատեղ հայտարարության ներկայացման և նյութերի հրատարակման մասին

/Զեկ.՝ Հ. Մաթևոսյան/

2. Ամբիոններում իրականացված գիտական աշխատանքների մասին ամբիոնների հաշվետվությունը

/Զեկ. Ամբիոնների վարիչներ/

3. Գիտական հետազոտությունների կենտրոնի հաշվետվությունը

/Զեկ. Ս. Բակունց/

4. Տեղեկատվություն Ակադեմիայի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի մասին

/Զեկ.՝ Հ. Ղարիբյան/

5. «Լավագույն երիտասարդ գիտնական», «Լավագույն մագիստրոսական թեզ» կանոնակարգեր սահմանելու մասին

/Զեկ. Վ. Բրուտյան/

6. Ընթացիկ հարցեր

- Մագիստրոսական թեզերի վիճակը

Որոշեցին՝

1 ***Գիտաժողովի արդյունքները գնահատել բավարար***

- ***Երաշխավորել*** միջազգային գիտաժողովին ներկայացված աշխատանքների հրատարակությունը «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» հանդեսում (Հավելված 1),
- ***Հաստատել*** համատեղ հայտարարության տեքստը (Հավելված 2):
- ***Նախապատրաստվել*** նոր գիտաժողովի՝ «Աղետների հոգեբանություն» թեմայով:

2 Ամբիոններում կատարած աշխատանքները համարել բավարար և երաշխավորել հրատարակության «Փրկարարական ամբիոն»-ի կողմից ներկայացված աշխատանքները Ակադեմիայի հնարավորություններով (Հավելված 3):

3 ***Ընդունել*** ի գիտություն Գիտական հետազոտությունների կենտրոնի հաշվետվությունը, ***ակտիվացնել և օգտագործել*** պրոֆեսորադասախոսական կազմի գիտական պոտենցիալը:

4 ***Հանձնարարել Ակադեմիայի բոլոր ստորաբաժանումներին՝ նախապատրաստվել և պատշաճ մակարդակով*** կազմակերպել փորձագետների աշխատանքը ՃԿՊԱ-ում Ակադեմիայի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի շրջանակներում:

5 ***Հաստատել*** քննարկման ներկայացված «Լավագույն երտասարդ գիտնական», «Լավագույն մագիստրոսական թեզ» կանոնակարգերը:

6 Մագիստրոսական թեզերի վիճակը ***գնահատել բավարար***, նոյեմբերի 26-ից սկսած կազմակերպել նախապաշտպանություն մի քանի փուլերով, թեզերի պաշտպանության օրը նշանակել ըստ ուսումնական պլանի ժամանակացույցի:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ե. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Ամփոփելով Ակադեմիայում 2019 թվականի նոյեմբերի 12-13-ը իրականացված ***«ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ*** միջազգային գիտաժողովի արդյունքները, ներկայացվում է հետևյալ համատեղ հայտարարությունը.

1. Ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում առկա են բազմատեսակ բնածին, տեխնածին, սոցիալական, բնապահպանական վտանգներ, ինչպես նաև ռազմական կոնֆլիկտներ և այլ ռիսկեր, որոնք խիստ արդիական են դարձրել բնակչության պաշտպանության հարցերը, աղետներին դիմակայելու մշակույթի ձևավորումը, որոնց լուծումը պահանջում է համատեղ հետազոտական աշխատանքների իրականացում:

2. Առաջնահերթ է դարձել նորարարական տեխնոլոգիաների՝ մասնավորապես անօդաչու թռչող սարքերի, ռոբոտատեխնիկայի, արհեստական բանականության և այլնի կիրառումն արտակարգ իրավիճակների ոլորտում:

3. Արդիական է իրականացնել լայնածավալ և նպատակային աշխատանքներ բնակչության անվտանգության մշակույթի ձևավորման ուղղությամբ, ինչը պահանջում է լուրջ մեթոդաբանության կիրառություն մանկավարժական գործունեության բնագավառում:

4. Կարևոր է մշակել աղետների ռիսկի գնահատման գործընթացում միասնական գիտական մտքի մեթոդաբանություն, ինչն իր մեջ կներառի նաև վտանգի խոցելիության և կարողությունների գնահատման միասնական մեթոդների ընտրությունը:

5. Ներդնել աղետների ռիսկի կառավարման գիտականորեն հիմնավորված գործընթացներ, որոնք կնպաստեն դիմակայուն երկիր ձևավորելուն և ունենալուն:

6. Անհրաժեշտ է զարգացնել երկրի ներսում միջգերատեսչական համագործակցությունն աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

7. Աղետների ռիսկի կառավարման տեսակետից անհրաժեշտ է ձևավորել միջազգային համագործակցության լայն ցանց առանձին երկրների համապատասխան կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ:

Կազմկոմիտեի նախագահ **Վ. Ա. Բրուտյան**